# ՊԱՏՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅԱՑՔ XVIII ԴԱՐԻ ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

*XVIII դ. հայոց պատմահայրենասիրական քնարական բանաստեղծությունը իբրև գրական երևույթ, իբրև ժամանակի կրոնաազգային, քաղաքական ազատասիրական բանաստեղծության բաղադրիչ մաս չի նկատվել։ Առհասարակ դարի հայոց նոր և ընդհանուր վերանորոգության շրջանի հայրենասիրական, ազատագրական քնարերգությունն ամբողջությամբ դուրս է մնացել հայ գրականության (պաշտոնական) բազմահատոր հրատարակություններից. XVIII դ. ներկայացվել է միայն աշուղական բանաստեղծության շրջանակներում։ Այս պատճառով, ահա, շոշափված չեն նաև այն հիմքերը, որոնց վրա աստիճանաբար զարգանում և ապա վերելք է ապրում XIX դ. հայոց նորագույն շրջանի ազգային, քաղաքական, ազատասիրական քնարերգությունը։*

*Անդրադառնալով անցյալ դարերի ողբական ստեղծագործությունների նյութին, շոշափած հարցերին Մանուկ Աբեղյանը նկատում է. «Քաղաքական կյանքի հին անկախության և ազատության, ժողովրդի բարեկեցության կորուստը, ժողովրդի հայրենաթափ վինելն ու ցրվելը, նախ այս են ողբում Լաստիվերտցու հետ, մեծ աղետից ցնցված ու խելաթափ։ Բայց երկրորդ սերունդը,—շարունակում է մեծ գիտնականը,—արդեն ուշաբերում է՝ լոկ ողբը բավական չէր։ Եվ ահա, ծնվում է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու ձգտումը՝ որոշ գաղափարախոսությամբ...»[1]։ XVIII դ. վերանորոգվող դասական բանաստեղծության մեջ հայ ժողովրդի քաղաքական ազատության հարցի շուրջ առաջին և երկրորդ սերունդների ստեղծագործություններում դրսևորված այս հայացքները վերարծարծվում են միասին՝ մի որոշակի գաղափարախոսությամբ։ Հենց քնարական, պատմաքնարական ողբերի միջոցով արտահայտվում են հայոց քաղաքական անկախությանն ու ազատագրության ձգտումները, գծվում ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու հնարավոր ուղիները։*

*Հայտնի է, որ հայ ազգային-ազատագրական շարժումները, որ դարասկզբում բռնկվել էին Սյունիքում, Արցախում և այլուր, որոշակիորեն ներգործում են գրական ստեղծագործական մտքի, գրականության գաղափարական զարգացման ընթացքի վրա։ Ուստի XVIII դ. քնարական և պատմաքնարական բանաստեղծություններում ոչ միայն արտացոլվում են հայ ժողովրդի հերոսական անցյալի առանձին էջեր, այլ միաժամանակ նոր ուժով բարձրացվում հայության ինքնաճանաչման, միաբանության, հայրենադարձության, ժողովրդի քաղաքական, ազատագրական պայքարի հարցերը։ Բանաստեղծությունը մաքառողական, դիմադրական պայքարի է կոչում հայ ժողովրդին ընդդեմ օտար տիրակալների։ Գործնական պայքարի այսօրինակ ծրագրային էջեր քիչ է ունեցել XV—XVII դդ. քնարական բանաստեղծությունը։*

*Ի՞նչ է տեղի ունենում։ Հայ ժողովրդի քաղաքական ազատասիրության գաղափարը XVIII դ. քնարական և պատմաքնարական բանաստեղծություններում, սոսկ կրոնական նյութի, կրոնական այլաբանության փակուղուց աստիճանաբար դուրս գալով, բացորոշվում է իբրև գեղագիտական կուռ հայացք։ Այս երևույթը Պետրոս Դպիրանցու կրոնական-քնարական երգերում նկատվում էր աղոտ ձևով և ապա ուժգնորեն բացահայտվում նրա աշխար-*

---

1 Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 71։

հիկ քնարական երգերում։ Եվ ահա, Պ. Ղափանցու քնարական ժառանգության հետ միասին՝ Կոմիտաս Քյոմուրճյանի, Հակոբ Նալչյանի, Պազասար Դպրի, Ղազար Չահկեցու, Պետրոս Նախիջևանցու, Սահակ երեցի, Պողոս Վտսեցու, Գրիգոր Օշականցու և այլոց քնարական և պատմաքնարական երգերը արմատապես փոխում են մեր պատկերացումները դարի վերանորոգվող հոգևոր երգի, կրոնական բանաստեղծության վերաբերյալ։

XVIII դ. հայոց ազատասիրական, քնարական և պատմաքնարական, հայրենասիրական բանաստեղծությունը ամբողջության մեջ գալիս է կրկին անգամ հաստատելու գեղագիտական այն ճշմարտությունը, համաձայն որի կրոնական երգը չպետք է անջատել աշխարհիկ երգից, ինչպես հաճախ արվում էր, և որ նրանցում արտահայտված հայրենասիրական, քաղաքական, ազատասիրական տրամադրությունները, աշխարհային թե կրոնական, պատմական թե ժամանակակից նյութի, պատկերների ոլորտներում, գալիս են նույն հիմքից, հետապնդում են նույն նպատակները, լուսավորում են հայ ժողովրդի կորցրած պետականությունը վերականգնելու նույն հանապարհը... «Ո՞րն էր նորը գեղարվեստական մտածողության մեջ,— գրում է գրականագետ Ս. Սարինյանը Պետրոս Ղափանցու բանաստեղծության գնահատման հարցի շուրջ իր օգտաշատ հոդվածում,—նորը այն էր, որ փ տարբերություն միջնադարյան տաղերգուների՝ բնության, սիրո, կյանքի, աշխարհի, աստծո առեղծվածների ընդհանուր մարդկային խոհի իմաստ էր ստանում, զգացմունքի կոնկրետությունը, գեղագիտական մտածողության մեջ կերպ էր առնում ազգի և հայրենիքի մոտիվը, մարդու խոհական աշխարհի՝ ընդհանուր փիլիսոփայական զեղումները փոխարինվում էին քաղաքացիական էության, ազգի ու հայրենիքի գալափարական դրսևորումներով»[2]։ Այս կերպ արդեն նոր բովանդակություն է ստանում Ղափանցու, Նախիջևանցու և առհասարակ դարի աշխարհիկ թե կրոնական բանաստեղծությունը։ «Կրոնական մոտիվը,— շարունակում է Ս. Սարինյանը,—այստեղ սերտորեն ձուլվում է քաղաքացիական, հայրենասիրական մտքերի հետ։ Նույնիսկ աստծո առեղծվածին հասնելու (աստվածանմանության) գաղափարը ծառայեցվում է քաղաքական, հայրենասիրական, ազգային ազատագրության գաղափարին»[3]։ Սա հիրավի գեղագիտական նոր և ճշմարիտ ընդհանրացում է։

Ուշագրավ է, որ «կրոնական» և հայրենասիրական, ազգային, քաղաքացիական մոտիվների ձուլումը իբրև գեղագիտական միտում, յուրովի արտահայտվում է X—XIV դդ. հայոց վերածննդի շրջանի բանաստեղծության մեջ՝ ողբերում, ներբողներում, պատմաողբերում, կաթողիկեին՝ հայոց ընդհանրական եկեղեցուն՝ էջմիածնին, Արարատին, Մասիսին, պատմական գործիչներին՝ Ներսես Մեծին, Գրիգոր Լուսավորչին, թագավորներին, իշխաններին, նշանավոր բանաստեղծներին, գիտնականներին, թարգմանիչներին նվիրված տաղերում, ներբողներում։ Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու, Վարդան Հայկազնի, Վահրամ Բաբունու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Հովհաննես Իմաստասիրի, Հեթում թագավորի, Վարդան Արևելցու, Հովհաննես Եղնկացու, Ստեփանոս Օրբելյանի, Հովհաննես Արքայեղբոր, Մխիթար Այրիվանեցու, Խաչատուր Կեչառեցու և այլոց լավագույն երգերում ակնառու է այս երևույթը։ Վարդան Հայկազնը դեռևս 1105 թվականին իր ուսուցչի մահվան առիթով ազգային հպարտությամբ ներկայացնում է հայոց հանճարների՝ Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Գագիկ թագավորի բացառիկ անհատականությունները.

Մովսէս պիտէր Խորենացի,
Քերթողահայր կենդանի,

---

2 Ս. Սարինյան, Պետրոս Ղափանցի (Պատմա-բանասիրական հանդես, 1969, № 3, էջ 265—266)։

3 Նույն տեղում, էջ 266։

Իմաստութեամբն անչափելի
Զնրդ նա հոգևոր տուն և տեղի...

Հոգևոր կյանքի վերելքն ապահովելու, գիտության, կրթության նոր բարձունքները նվաճելու, հայոց թագավորական իշխանությունը ամրապնդելու նպատակներին էին հետամուտ V դ., X—XIV դդ. հայ պատմագիրներն ու բանաստեղծները.

Գադիկ պիտէր Բագրատունի
Կամ տիրահայրն իմ հրաշալի,
Գրիգոր հզոր Պահլավունը,
Իւր պերճ բանիւքն էր պանծալի,
Զափովք տաղի Հոմերոսի.
Կամ համանունն իւր սիրելի,
Փիլիսոփայն Նարեկացի,
Զայն հանճարեղն ես ուզէի,
Եւ ինձ ի յաւգն կոչէի,
Զմեր շատ աղէտոս դրէին,
Ու ապագայիցն թողնէին[4]։

* * *

Ա՛րդ, Յովհաննէս լայր, սուրբ սքանչելի,
Ի ծունկս անկեալ ամենեքեան հառաչման սրտի,
Եւ աղաչեմք զերանելի միջնորդ բարի,
Զփրկութիւն միշտ հայցելոյ հայոց աշխարհին,—[5]

ներբողում է հայոց թագավորին Հովհաննես Արքայեղբայրը։

XVIII դ. հայոց նոր և ընդհանուր վերանորոգության շրջանի քնարական և պատմաքնարական բանաստեղծության մեջ, ահա, վերարծարծվում, բացորոշվում և զարգանում է հայոց նախորդ դարերի և հատկապես վերածնունդի բանաստեղծության կրոնազգային, պատմահայրենասիրական այս գիծը։

Պետրոս Ղափանցուց առաջ և հետո, կամ նրան զուգահեռ, իրենց աշխարհիկ և կրոնական հայրենասիրական, ազատասիրական երգերով հանդես են գալիս՝ Պաղտասար Դպիրը, Սահակ Երեցը, Կոմիտաս Քյոմուրճյանը, Ղազար Ջահկեցին, Պողոս Վանեցին, Կարապետ Սեբաստացին, Հակոբ Երեցը, Սիմեոն Երևանցին, Պետրոս Նախիջևանցին, Գրիգոր Օշականցին, Հակոբ Նահամիրյանը, Թադեոս Ջուղայեցին և այլք։ Նրանք իրենց համապատասխան երգերով լրացնում, հարստացնում են դարի ողբի և սթափման կրոնազգային, ազատասիրական, հայրենասիրական և պատմահայրենասիրական քնարերգությունը՝ միասնաբար։

Արդ, տեսնենք, թե ի՞նչ է ներկայացնում XVIII դ. պատմահայրենասիրական քնարերգությունը, ի՞նչ նոր բան է ավելացնում այն, ընթերցողին ծանոթ 10—14-րդ և 15—17-րդ դարերի քնարական, պատմաքնարական ողբերի ներբողների, քնարական հայրենասիրական, ազատասիրական բանաստեղծության վրա։

XVIII դ. քնարական բանաստեղծության ոլորտներում իշխող քաղաքական ազատասիրական գաղափարախոսությունը անմիջական սնունդ է ստանում իր ժամանակի ազգային-ազատագրական շարժումներից, ինչպես արդեն այդ հայտնի է, և դրա հետ մեկտեղ, հայ ժողովրդի պատմական անցյալից, նրա հերոսական կյանքի դասերից՝ կուռ միասնությամբ։ Այս երևույթը դարի բանաստեղծության մեջ հաճախ արտահայտում է պատմական զուգահեռների, վերհուշերի, պատկերների, համեմատությունների միջոցով։ Պատմահայրենասիրությունը, սակայն, ավելի լայն հասկացություն է և դարի կրոնազգային վերանորոգվող բանաստեղծության մեջ ստանում է առավել

4 Բարամեան, 1874, էջ 264—265։

5 Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ, Ս. Ղազար (ձեռ. № 2070), 1885, էջ 509։

որոշակի արտահայտություն։ Հայտնի է, որ հայոց մեջ Մովսես Խորենացուց սկսած գիտական մշակված հայացք գոյություն ուներ պատմության նկատմամբ։ XVIII դ. կրոնաազգային նշանավոր գործիչները ևս՝ Մխիթար Սեբաստացին, Հակոբ Նալյանը, Պաղտասար Դպիրը և այլք, առիթ են ունեցել իրենց վերաբերմունքը հայտնելու պատմության հարցի վերաբերյալ և նշել այն վիթխարի դերը, որ ունի պատմությունը ժամանակակից սերունդների կրթության, դաստիարակության գործում։ «...Քանզի գործ պատմութեան է ծանուցանել զեղեալ իրն, որ փակի ընդ անցեալ ժամանակաւ,—նկատում է Պաղտասար Դպիրը,—եւ շահաւէտութիւն նորին այն է, զի զեղեալն ի վաղ ժամանակաց կացուցանէ առաջի աչաց մերոց, այնպէս, որպէս թէ այժմ իցէ եղեալ, վասնորոյ ասէ ոմն իմաստասիրաց, թէ պատմութիւն է վկայ ժամանակաց, լոյս ճշտութեան, կենդանութիւն յիշողութեան, վարդապետ կենաց և ծանուցիչ հնութեան։ Ուրեմն եթէ ո՛չ պահէր պատմութիւնն ի միտս մեր զյիշատակ եղելոցն, մոռանայք զնոսա դիւրապէս»[6],—գրում է նա իր կողմից հրատարակության պատրաստված, սրբագրված «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ որ կոչի Զենոբ» աշխատության «Բան սակաւուկ առ բարեմիտ ընթերցողդ» առաջաբանում։ Այսպես են ըմբռնել պատմության դերը XVIII դ. կրոնաազգային լուսավորական գործիչները և այդ ըմբռնումը դրսևորվում է նաև բանաստեղծության մեջ։ Իբրև ընդհանուր գիծ XVIII դ. պատմական հարցերի շուրջ ստեղծվում են առավել քան քնարական բանաստեղծություններ, ներբողներ, ձոներ, փոքրածավալ զանազան երգեր և քնարական պոեմներ։ Պատմական մեծ վտանգի ողբեր, այուժետային (պատմական) պոեմներ, պատմակենսագրական երկեր, որոնք գերազանցապես նկարագրական բնույթ ունեն, ստեղծվել են նախորդ դարերում։ Նոր ժամանակների, օրվա հրատապ հարցերի լուծումը պահանջում էր քնարական անմիջական արձագանք, ընդհանրացված բանաստեղծական խոսք... Եվ ահա, դարի նշանավոր բանաստեղծները իրենց փոքրածավալ պատմաքնարական երգերով, ողբերով, ներբողներով, քառյակային բանաստեղծություններով ամուր կապ են ստեղծում հայ ժողովրդի պատմական անցյալի և ներկայի միջև, ընթերցողի առջև վերակենդանացնում են ժողովրդի պատմության ուշագրավ էջեր, դեպքեր, դեմքեր, մաքառողական պայքարի վառ օրինակներ.

Պատմոզական այսմիկ տառիս,
Ականջադրուկ թէ եղիցիս,
Ղօղեալ գործոց մերոց տոհմիս
Տեղեակ ոմանցն առ լինիցիս,—

գրում է Պաղտասար Դպիրը, բացահայտելով այն մեծ կարևորությունը, որ ունի ազգային պատմության ուսումնասիրության հարցը։ Երգիչը իր ժողովրդի կյանքն ու գործը, նրա դարերի անցած ճանապարհն իմանալու, ճանաչելու պատգամ է հղում իր ժամանակակիցներին.

Քերթողահայր մեծն Մովսէս,
Է՛ր սերընդմամբ ի հայ ազգէս,
Յորմէ ուսաք մեք վարժապէս,
Ըզքերթուղեան ազնիւ հանդէս[7]։

Բանաստեղծը մի քառատողի մեջ բնութագրում է հանճարեղ Խորենացու «Հայոց պատմության» ուղենշային դերը հայ ժողովրդի գրականության, պատմության, նրա դեղագիտական մտածողության ձևավորման, նրա քերթողական արվեստի զարգացման համար։ Կոմիտաս Քյոմուրճյանը իր «Ողբերգական աղաւաղումք» քնարական հուզաբեցուն բանաստեղծության

6 Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ, Պոլիս, 1719, Առաջարան, էջ Դ։
7 Պաղտասար Դպիր, Երևան, 1958, էջ 259։

մեջ հայոց ժամանակակից կյանքի ծանր վիճակը («Թշուառութեան ազգիս») ողբալու համար դարձյալ դիմում է անցյալին՝ Երեմիան, մեծ Խորենացին ձայնակցում են երգչին հայոց անհուն վիշտը ողբալու համար.

Զարթի՛ր, Երեմիա և ողբս յօրինէ,
Արտասուօք աղբայ և զսեղ աւաղէ,
Զի կորուլի ազգն մեր ողբոց արժան է.
Վասն այն ողբամ և յորդ արտասուեմ։

Առ ընդ քեզ ողբակից զմեր Խորենացին,
Լէ՛ր լալակից նմա ողբօք դառնագին,
Աւա՜ղ, ափսո՛ս կարդա մեր հայոց ազգին.
Վասն այն ողբամ և յորդ արտասուեմ։

Քանզի եղեաք գերի մեք յօտար ազգաց,
Կոխան և անպիտան մէջ համայն ազգաց,
Զունինք դէտ և տեսուչ և կամ հոգաբարձ.
Վասն այն ողբամ և յորդ արտասուեմ[8]։

Պետականազուրկ հայ ժողովրդի քաղաքական ազատասիրական պայքարը ղեկավարող ուժերը թույլ են, իսկ օտարազգիք՝ ուժեղ, կատաղի, ցավով ողբում է Մովսես Կարնեցին և դարձյալ օգնություն հայցում հայոց մեծերին.

Սուրբ Սահակ Պարթև, ազինս հռետոր,
Որպէս նախասացեր եղաք աստանօր,
Ո՛չ ունելով իշխան և ո՞չ թագաւոր,
Ա՛յց արա տառապեալ ազգիս մեր հայոց։

Եկ՝ Տէր Լամբրոնացի, լէ՛ր մեզ ցաւակից,
Որպէս գուշակեցեր, եղաք ողբակից,
Եկեղեցիք, պանդոկք, իշխանք՝ գողակից,
Ա՛յց արա տառապեալ ազգիս մեր հայոց[9]։

Դարի քնարական բանաստեղծությունը խաչաձևում է հինը նորի հետ։

Սահակ Երեցը ընդդեմ տաճկաց վրեժխնդրության է կոչում Դավիթ Բեկի քաջարի զինվոր Տեր-Ավետիսին։

«Ողբ ասելի ապաշխարող մեղաւորաց, ի վերայ ողբոց սրբոյն Երեմիայի» քնարական պոեմում Պետրոս Նախիջևանցին դիմառնական ընդունված ձևի և պարզ չափի մեջ, իբրև ականատես, դառնագին ողբում է այն աղետալի իրավիճակը, որ ստեղծել էր պարսիկ Թամրազ խանը իր հայրենի Նախիջևան քաղաքի և նրա բնակչության համար։

Բանաստեղծը փբրև մի Նոր ողբերգակ, ինչպես Երեմիան, ինչպես Խորենացին և Նարեկացին ողբում է հայրենի քաղաքի անպաշտպան, ծանր իրավիճակը.

Ընդ խաւարին իշխանութեան,
Նստին ի մէջ ծառայութեան,
Ազատարար որդւոց մարդկան,
Դարձո՛յ ի վեանս ազատութեան[10]։

XVIII դ. բանաստեղծության մեջ Գրիգոր Օշականցին է, որ Արարատյան դաշտը, մեծ ու փոքր Մասիսները ներկայացնում է իբրև ազգային վշտի արտահայտության խորհրդանիշներ։ Գրիգոր Օշականցին իր հայրենասիրական քնարական բանաստեղծությունները, տեսիլները, եկեղեցական չափածո արձանագրությունները գրել է Մեսրոպ Մաշտոցի ներշնչանքով։ Գր. Օշա-

8 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1063, թերթ 225ա։

9 Դոկտ. հ. Համազասպ Ոսկեան, Չորս հայ տաղասացներ..., Վիեննա, 1966, էջ 158—159։

10 Մատենադարան, ձեռ. № 6744, թերթ 40ա—41ա։

Լանցին Մեսրոպ Մաշտոցին է նվիրում իր ստեղծագործության անդրանիկ ժողովածուն. «Եւ ղայսոսիկ երկս իմոց վաստակոց, իբրև զպտուղ նախախայծ նմա ընծայել... Եւ արդ, ուրեմն, քեզ տեառնագրեալ ղայսոսիկ, ո՛վ սուրբդ աստուծոյ, ի քոյ, անուն աշխատեցայդ։ Լե՛ր ինձ ուղեկից յայսմ ճանապարհորդութեան, խօսեաց յականջս ծառայիդ քո զօգտակարն ի զպիտանին...»[11]։ Հասկանալի է, թե որքան խորն է Գրիգոր Օշականցու վրա մաշտոցյան հանճարի ներգործությունը։ Նա իրեն կոչում է «Որդեգիր Սեսրոպայ վարդապետին» և իր կոչմանը արժանի հայրենասիրական գեղեցիկ երգեր հորինում.

Համայն ազանց դու գովելի,
քաղաքդ Անի պանծացեալ,
Ասպանշական թագաւորաց
եւ զօրաց՝ արդ մենացեալ.
Իբրեւ այրի լքեալ թողեալ,
կոխան ոտից ընկեցեալ.
Բնակիչք քո յաշխար օտար հեռացան,
Աւա՜ղ, տարագի՛ր, տարագի՛ր ո՜հ[12]։

Քնարական երգը, ազգային, պատմական պաճուճանք, տեղագրական բացորոշ գույն ու երանգ է ստանում։ Գործողությունների վայր են դառնում մեծ ու փոքր Մասիսները, հայրենի բնաշխարհի հնագույն քաղաքներն ու ավանները՝ իրենց հրաշակերտ հուշարձաններով, եկեղեցիներով, տաճարներով, բերդերով և աշտարակներով։

«Շիրակայ դաշտի դիցուհուս՝ Անի քաղաքին նվիրված բանաստեղծություններով հարուստ է մեր գրականությունը (դրանք հատուկ ուսումնասիրության են սպասում)։ Ահա դրանցից նաև մեկը՝ Հակոբ Դպրին վերագրվող «Տաղ ի վերայ Անի քաղաքին» բանաստեղծությունը։ Երգիչը սգով, ողբով իր ժողովրդի անհոն զայրույթն է հայտնում Անիի անօրեն զավթիչների նկատմամբ.

Պարտէզ ծաղկախիտ Շիրակայ դաշտին,
Բուրմունք անուշունք ի քեզ բուրէին,
Ահա, գոսացոյց խորշակ պարսկային,
Ե՛կ, անապատ հիւսիսոյ, ցողեա՜ յիմ այգին։

Որ երբեմն էիր գահ թագաւորաց,
Ի քեզ հանգչէին որդիկք քո երկանց,
Այժմ ընդէ՞ր եղեր որջ աւազակաց,
Ի քեզ կաքաւեն դստերք համբարուաց[13]։

Անօրենների կողմից Մարդավան գյուղաքաղաքի Ս. Աստվածածնի Զարխափան վանքի հրկիզման, ավերման և ապա ժողովրդի միահամուռ ուժերով նրա վերաշինության արտառուշ պատմությունն է ներկայացնում Ստեփանոս Ադանեցին իր պատմաքնարական մի երգում[14]։

Նորոգութիւն գիր քան զՆոյեան տապանին,
Միշտ փրկողի զանթիւ բազմաց ըզհոգին,
Եղև տրօվք ասքանաղեան մեր տոհմիս,
Միահամուռ ժողովրդեան վիճակիս.
Արդ, ո՛վ տաճար պատմական,
Զմեզ արա դու արժան,
Ի տես դեղոյդ աննման, աննման...[15]։

---

11 Մատենադարան, ձեռ. № 6682, էջ 2ա։

12 Նույն տեղում, ձեռ. № 6682, էջ 11ա։

13 Դոկտ. Համազասպ Ոսկեան, Զորս հայ տաղասացներ..., էջ 110։

14 Բ. Վ. Կյուլ եսերյան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանից... Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 1073 (ձեռ. № 233, թերթ 74ա)։

15 Մատենադարան, ձեռ. № 5066, թերթ 140բ, 141ա։

Վայոց ձորը (Եղեգնաձորը) երգում է Պետրոս Ղափանցին, Հայաստան աշխարհում է, հին, վաղեմի զրույց կա այդ մասին։ Իսկ այժմ, այն բանակների ձեռքին է, գերի, անտերունչ, անարգավանդ[16]։

XVIII դ. պատմահայրենասիրական, քնարական բանաստեղծությունների մեջ մեծ թիվ են կազմում էջմիածնին նվիրված երգերը։ Այդպիսի բանաստեղծությունների հեղինակներ են հոգևոր, աշխարհիկ, ազգային-ազատագրական շարժման ու մշակութային կյանքի գրեթե բոլոր նշանավոր գործիչ-բանաստեղծները՝ Պաղտասար Դպիր, Հակոբ Նալյան, Պետրոս Ղափանցի, Սիմեոն Երևանցի, Ղազար Ջահկեցի, Պետրոս Նախիջևանցի, Պողոս Կաղզվանցի, Գրիգոր Կամպանյան, Հովհաննես Կարնեցի, Մովսես Էրզրումեցի, Գևորգ Խուրով, Սերովբե Պատկանյան և ուրիշներ։ Էջմիածնին նվիրված բանաստեղծությունները, նախորդ դարերի համանուն երգերի համեմատությամբ, ունեն ավելի ընդգծված կրոնաազգային, կրոնաքաղաքական, ազատասիրական բնավորություն։

XVIII դ. հայրենասիրական և պատմահայրենասիրական, հայրենիքի և բնության, քնարական բանաստեղծությունները մաքառողական պայքարի միանշանակ ծրագրեր ունեն։ Դրանք լցված են ազգի և եկեղեցու գոյատևման, ինքնաճանաչման, հայոց կորցրած պետականությունը ետ ստանալու սներեր հույսերով։ Իանականության ու զգացմունքի նույն հնչյունն է իշխում և Պաղտասար Դպրի 1708 թ. գրած «Ի ննջմանէդ» հանրահայտ երգում, և Ղազար Ջահկեցու 1737 թ. տպագրած «Երգարանում», և Պ. Ղափանցու 1752—1772 թթ. հյուսած՝ ազգին և հայրենիքին նվիրված բանաստեղծություններում, և՛ Թադեոս Սագինյանցի «Ողբ Հայաստանեաց» քնարական պոեմում, և՛ Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ»-ում...[17]։

Մի քանի խոսք վերջիններիս մասին, որոնք բարեբախտաբար տեղ են դտել «Հայ նոր գրականություն» բազմահատորյակում (ուր մոռացված են նրանց արժանավոր նախորդները)։ Հակոբ Շահամիրյանի «Յորդորակում» ևս զուգահեռաբար մարմնավորվում, կերպարանք են առնում հայոց անցյալը և ներկան, հայ ժողովրդի պատմական և ժամանակակից կյանքը... Այս եղանակով Հակոբ Շահամիրյանը խոսում է ընթերցողի հետ հայ ժողովրդի քաղաքական ազատության հարցի շուրջ, պարզելով նրա առջև երեք խնդիր. ի՞նչ էր ներկայացնում հայ ժողովուրդը անցյալում, ի՞նչ է ներկայացնում իրենից հայ ժողովուրդը այժմ և՝ ինչպե՞ս պիտի լինի նա ապագայում։ Այլ կերպ ասած, բանաստեղծ-հրապարակախոսը պատմական փաստական հիմքի վրա ներկայացնում է հայ ժողովրդի անցյալը, ներկան և առաջադրում է պայքարի միջոցներ, ծրագրեր՝ նրա գալիքի համար։ Շահամիրյանի վերոհիշյալ երկը XVIII դ. մեզ ծանոթ հայ ազատասիրական, կրոնաքաղաքական, գաղափարական բանաստեղծության տրամաբանական զարգացումն է, նրա բարձրակետը։ Քրիստոնեական բարոյագիտական հայեցողությունը հավատք և հայրենիք միասնական հայացքը, որ իշխում է XVIII դ. քնարական ազատասիրական բանաստեղծության մեջ, ինչպես նկատեցինք վերևում, Շահամիրյանի մոտ ևս ունի իր որոշակի արտահայտությունը։ «Մաղթանք առ ամենասուրբ երրորդութիւն», «Շնորհակալութիւն եկեղեցականաց» և այլ ոտանավորների մեջ... թեև բանաստեղծը հայոց ապագա հասարակության մեջ եկեղեցին անջատում է պետությունից, բայց կրոնական նույն հայացքը, նույն գաղափարն է պաշտպանում, ինչ որ բնորոշ է նախորդ դարի գրեթե բոլոր կրոնալուսավորական բանաստեղծներին։ Հ. Շահամիրյանը նույնպես, ինչպես մեզ ծանոթ հոգևոր և աշխարհիկ երգերի հեղինակները, օգնություն է հայցում աստծուց, աղերսում ամենասուրբ երրորդությանը՝ ղորավիգ լինելու անտերունչ, անօգնական ու տկար հայ ժողովրդին։ Շահամիրյանի մոտ ևս

16 Տե՛ս Պետրոս Ղափանցի, Երևան, 1969, էջ 347։

17 Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1772, էջ 20—21։

ուժեղ է մեղքի և զղջման զգացողությունը։ Հ. Շահամիրյանը նույնպես խոսում է աստծու հետ՝ իր ե իր ժողովրդի, այսպես կոչված «մեղքերի» մասին։ Նա ևս ժողովրդի ճակատագրի համար ապավինում է ամենակարող երկնային թագավորին, հիշում է Երեմիային, նրա ողբը, դիմում է Գրիգոր Լուսավորչին, Տրդատ թագավորին, առավել ուժգին հավատով լցված ոգեշնչում է հայ ժողովրդին՝ նախնիների հերոսական օրինակով և միաբանության, ուխտի ու պայքարի կոչում հայորդիներին.

*Ուստի, զարթի՛ր, զարթիր և արի՛, ո՞վ սուրբ Երեմեայ՝*
*ողբերգակ Իսրայելի....*
*Զի մերս գերութիւն, յորում այժմ կամք անմխիթար եղև, քան*
*զձերն յոյժ աւելի...*
*Զարթի՛ր, զարթի՛ր, ո՛վ սուրբ Գրիգորիոս, հանդերձ սուրբ*
*և սիրելի Տրդատաւդ...*

*Հակոբ Շահամիրյանը անդրադառնում է հայ ժողովրդի շուրջ չորսդարյա պետականազուրկ, հալածական, դառը կյանքի պատմությանը և սրտի խորին կսկիծով, ի լուր աշխարհի հայտնում, որ իր ժողովուրդը եղել է ստրուկ, պատանդ, դերի, որ նրա վաստակը հափշտակել են օտար տիրակալները, թշնամիները. մինչև ե՞րբ... մռնչում է հայրենասեր բանաստեղծը.... «Մինչև երբ» ...այս հարցը մեղ ծանոթ է նաև Պաղտասար Դպրի, Պետրոս Նախիջևանցու, Պետրոս Ղափանցու և շատ ուրիշների երգերից...*

*Այս նույն հարցը վճռականորեն բարձրացնում է նաև Թ. Սագինյանցը իր «Ողբ Հայաստանեայց» երգում։ Նրա ողբում ևս բացահայտ է հնի ու նորի կապը, նա ևս, ինչպես իր նախորդները, ժամանակակից սերունդներին կոչ է անում սովորել անցյալից, հետևել մեր նախնիներին, «նիզակաւոր արքայական պատուական իշխաններին», որպեսզի փրկենք մեր գեղեցկատեսիլ աշխարհն Հայոց։*

*Դարձարուք և տեսէք ըզմայր ձեր սիրական,*
*Թէ որպէ՞ս կայ ի ձեռս գայլոց՝ անօգնական,*
*Ո՞ւր են իշխանքս նիզակաւոր արիական,*
*Եւ պատուական իշխանազունքն զօրական,*
*Զեկեղեցիքն զմբեթաշէնք, վայելչական,*
*Եղեալ է խուղ գազանաբնակ, խարխուլական...*[18]։

*Սակայն XVIII դ. պատմահայրենասիրական քնարերգության ամենանշանավոր դեմքը Ղազար Ջահկեցին է. նրան է պատկանում պատմության զանազան հարցերի շուրջ ստեղծված երգերի ամենամեծ շարքը։ Անցած դարերի բանաստեղծության պատմության մեջ (X—XVII դդ.) պատմաողբեր շատ են գրվել, սակայն Ներսես Շնորհալուց, Սիմեոն Ապարանեցուց և Հովասափ Սեբաստացուց հետո, Ղազար Ջահկեցին է նշանավոր այն գործիչ-բանաստեղծը, որն իր քնարական, ծիսական երգերի՝ շարականների, աղոթքների հետ միասին գրել է նաև պատմական, պատմահայրենասիրական թեթևաշունչ քնարական երգեր և ներբողներ՝ որոշակի գաղափարախոսությամբ։ Բանաստեղծն իր «Գիրք նորաբոյս, որ կոչի Երգարան» ժողովածուում, օրհներգություններից հետո՝ «զօրհնութիւն նորս և հոգևորս» սուրբ հայրերին, մարգարեներին, առաքյալներին, ավետարանիչներին, էջմիածնին նվիրված երգերից անբաժան, ներկայացնում է պատմական նշանավոր անձանց նվիրված իր երգերի շարքը։ Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Ներսես Մեծ, Սահակ Պարթև, Վարդան զորավար, Ղևոնդ երեց, Ատոմ, Գևորգ զորավար, Վրթանես, Արիստակես, Որոտնեցի, Տաթևացի—*

18 Թ ե ոդ է ո ս Ս ա գ ի ն ե ա ն ց, Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեայց,- Մադրաս, 1791, էջ 11։

ահա նրա երգերի պատմական հերոսների ո՛չ լրիվ կազմը։ Այս շարքով Ղ. Ջահկեցին, հայոց դարավոր բանաստեղծության մեջ առաջին անգամ բարձրացնում, պաշտպանում, զարգացնում է հավատքի, գիտության և զենքի՝ երեք կարևոր գործոնների միության գաղափարը՝ իբրև հայոց ազգի գոյապայքարի, կորցրած պետականությունը վերականգնելու հիմնական նախապայման։ Այս է Ղ. Ջահկեցու «Նորաբոյս երգարանի» նոր և առաջնային հարցը, նրա բանաստեղծությունների ազգային գաղափարական միտումը։ Մ. Մաշտոցին, Գր. Տաթևացուն նվիրված երգերով նա առաջին գծի վրա է դնում ազգի մեջ գիր ու գրականության, կրթության, գիտության արմատավորման հարցը, Գրիգոր Լուսավորչին, Ներսես Մեծին, Սահակ Պարթևին նվիրված երգերով բարձրացնում է ազգային ընդհանրական եկեղեցու, քրիստոնեական ուղղափառ հավատքի, բարոյական աստվածաբանության չափերի վերաարմատավորման խնդիրը, իսկ Վարդանանց պատերազմի հերոսներին, հայոց քաջերին ու նահատակներին նվիրված երգերով պաշտպանում է զինված ապստամբության, ազատագրական պայքարի խնդիրը՝ նորովի... Սա հիրավի բանաստեղծական ծրագրային նոր առաջադրանք է, հայ ժողովրդի պատմության դասերից հանված մի խիզախ եզրահանգում, որ անում է Ղազար Ջահկեցին՝ Պետրոս Ղափանցուց առաջ.

Սոքա մեր հարք և վարդապետք,
Տածիչ հոգւոց քաջ հայրապետք,
Հայաստանեայց իշխանք և պետք,
Հալածեցին զսանդարամետք...[19]։

Ղ. Ջահկեցին ոգեշնչում է ժողովրդին ընդդիմանալ չարին, խորտակել բռնակալների լուծը, քաջաբար, խորն ատելությամբ, անհուն վրեժով գոտեմարտել մահվան հետ, չընկրկել թշնամու առաջ, մեռնել պատվով, մեռնել հայրենիքի համար.

Այսօր ողբս առեալ, պարտ է մեզ յօրինել,
Եւ զԵրեմեաս ընդ մեզ առեալ ածել,
Վըշտալի անձամբ դառնագոյն արտասուել,
Ի խորոց սրտէ հեծեծմամբ հառաչել...[20]։

«Երգ սրբոց Ղևոնդեաց», «Երգ սրբոց Վարդանանց» բանաստեղծություններում նա դարերի խորքից ընթերցողին է ներկայացնում հայ զորավարների կենդանի պատկերները, մեկնաբանում նրանց հերոսական և մարդասիրական գծերը, փառաբանում հայ ժողովրդի ուխտն ու միությունը։

Ղ. Ջահկեցին դիմելով անցյալին, պատմությանը՝ շնչավորում է ներկան, անցյալի հերոսական օրինակների միջոցով առաջադրում է օրվա խնդիրները։

Ղ. Ջահկեցին հակադրում է անցյալը ներկային և ինչպես Պետրոս Ղափանցին, Պետրոս Նախիջևանցին, Ողոս Վանեցին և այլք, քնարական երգերի միջոցով կոչ է անում՝ կանգնել թշնամու դեմ-հանդիման և փրկել Հայաստան աշխարհը՝ պարսկաթուրքական բռնակալական լծից։ Բանաստեղծը ճշմարիտ պատմագետի հավատարմությամբ կենդանացնում է հեռավոր անցյալը, յուրովի կերպարանավորում է ազգի և հավատքի պաշտպանության համար արդար պատերազմի մեջ մտած ժողովրդի զավակներին՝ Վարդան զորավարին, Ղևոնդ Երեցին և նրանց բոլոր զինակիցներին.

Հրաւիրեմամբ մեծի Յօսէփ վեհափառին,
Եւ Ըռըշտունեաց սուրբ Սահակայ պէտին,
Այլ և Ղևոնդեայ մաքուր քահանային,
Քաջին Վարդանայ յաղթող զօրավարին,

19 Ղ ա զ ա ր Ջ ա հ կ ե ց ի, Գիրք նորաբոյս..., էջ 163։
20 Նույն տեղում, էջ 206։

Միաբանութեամբ ուխտս եղեալ և դաշին,
Մրտնել ի մարտ վասըն սիրոյ խաչին[21]։

Ղազար Ջահկեցու Վարդան Մամիկոնյանը մեծ զորավար է և շարքային խիզախ զինվոր, իր մարտիկների խնամատար հայրը, հոգեկից ընկերը և առաջնորդը, կազմակերպիչը։ Նա հայ զինվորներին իր շուրջն է համախմբում զորագնդեր կազմում, քաջալերում նրանց, ուժ ու կորով ներշնչում... Ահեղ, անհավասար մարտերից պատվով դուրս գալու համար Ղազար Ջահկեցու Վարդանը հայրաբար հուսադրում է թուլերին, տկարներին, բորբոքում նրանց մեջ ազնիվ, արդար, պաշտպանողական, սրբազան պատերազմի տենչը, դեպի թշնամին նրանց համակում ատելությամբ, բացատրում նրանց մահու և կենաց պայքարի խորհուրդը, դիմադրության անհրաժեշտությունը՝ իբրև վերջին, անխուսափելի միջոցի.

Մերկացեալ ըզսուրն ի Հայաստան երկրի,
Ի շար պատենից յանօրէն Յասկերտի,
Կոտորեալ ապառեաց զազգս մեր Պարթևի,
Եւ զերկրպագուս ամենասուրբ խաչի։
Զաշխարհս Հայոց եւ զմեծ տունս Արամեան,
Եւ խաւարեցոյց զեկեղեցիսն համայն[22]։

Բանաստեղծական պարզ տողերի մեջ, բայց խորապես ազդու եղանակով Ղազար Ջահկեցին վերպարանավորում է Վարդանանց պատերազմի, Ավարայրի ճակատամարտի հերոսական պատմությունը։ Հայոց զորագնդերի, զորքի հավաքագրումը, մարտի նախապատրաստությունը, թշնամու անհավասար ուժերի ահեղ գոտեմարտը՝ պատերազմը երկու բանակների միջև և հայոց զորքի ծանր պարտությունը, նրա մեծ զորավարի՝ Կարմիր Վարդանի հերոսական վախճանը մարտի դաշտում.

Եկին պարսիկքն սևագունդք,
Երամք փրղօք գազանագունդք,
Խառնեալք ընդ միմեանս երկոքումբք,
Եւ սուսերաց փայլատակմունք։

Ամպ սևագոյն անդ որոտաց,
Ճայթմունք նետից և նիզակաց,
Դառն և դաժան այլ սուսերաց,
Որպէս կարկուտ առ մեզ տեղեաց։

«Մտնել ի մահ վասն հաւատոյ և հայրենեաց»։ Այս էր հերոս նահատակների՝ Վարդանի, Ղեոնդ Երեցի, Խորենի, Տաճատի, Արսենի, Հմայակի, Արտակի, Վահանի և այլ քաջերի վերջին խոսքը.

Հասին ի յափ Տղմուտ գետին,
Եւ անդ ըզվրան իւրեանց հարին,
Անդ հաղորդեալ մարմնոյ փրկչին,
Եւ սուրբ արեան կենարարին[23]։

Հենց այստեղ Տղմուտ գետի ափին է տեղի ունենում ամենասարսափելին։ Հայ դյուցազունները մենամարտում են փղերով զինված «գազանադնդերի» դեմ.

Մեծըն Վարդան անդ կատարեալ,
Զանանց պըսակն իսկ ընկալեալ,
Խորէն, Տաճատ, Արսէն ընտրեալ,

21 Նույն տեղում, էջ 206։
22 Նույն տեղում, էջ 206—207։
23 Նույն տեղում, էջ 209։

Եւ Համայակ, Արտակ գովեալ։
Վահան վկայն ընդ Գարեգին,
Եռտասն և վեց թիւ հազարիս,
Եղեն վկայք տէառն Յիսուսին,
Դաւանելով զԱստուած Որդին[24]։

Ղազար Ջահկեցու պատմահայրենասիրությունը գեղագիտական կուռ մտահայացք է, պարզ ու որոշակի, առանց այլաբանության, առանց տատանումների։ Դա օրվա, դարի, ժամանակի պայքարի ծրագիր է, փաղափարական առաջադրանք, որ այնքան կուռ նկարագիր է ստացել նրա «Գիրք նորաբոյս... երդարան»-ը փակող «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհի» բանաստեղծության մեջ։ Այստեղ բանաստեղծը նորից ու նորից անդրադառնալով հայոց պատմության տխուր էջերին, հրապարակախոսական մեծ շնչով բարձրացնում է հայ ազգի պետականության փառքը, նեբբողում մեծերին՝ սկսած Արշակունիներից և հույս հայտնում, որ կգան նոր Արշակունիներ, նոր զորավարներ ու քաջ իշխաններ, նորից կծնվի «Աղեղնատոր Հայկը... գեղեցկատեսիլ Տիդրանը», «Տիեզերասատան Արշակը», «Արիական Վազարշակը», «Քաջն Վարդանն» ու նրա մյուս զինակիցները և կփրկեն հայոց ողջ աշխարհը՝ «Համայն զաշխարհն Հայաստան»։

Վանիչ պարսիցըն Խոսրով,
Եւ Տրդատ հրզօր մեծ արքայն,
Որ զԹրշնամիս պատառէր,
Որպէս առիւծ և գազան։

Յաղթող ազգն Արշակունեաց,
Եւ պարթևանքն, որք զօրացան,
Վա՜յ և եղուկ մեզ եղեն,
Որ ի մէնջ նոքա սպառեցան։

Ո՞ւր են փառազարդ իշխանքն,
Զօրեզ և հրզօր Անգեղտան,
Քաջամարտիկքն Մուշեղ,
Սպառազէն և գայլքն Վահան,

Որ պատերազմին վասն մեր,
Ազատեն զդերեալքս սմենայն,
Փրկելով զազգս և զազխնս,
Եւ համայն զաշխարհ Հայաստան[25]։

Ահա ողբի և սթափման բանաստեղծության բարձրագույն կետը՝ XVIII դ. առաջին կեսի հայոց նոր և ընդհանուր վերանորոգվող բանաստեղծության պատմության մեջ։ Հիրավի տա ողբ չէ, այլ խորն սթափման կոչ՝ ազնիվ պայքարի, նոր մարտահրավեր արդար պատերազմի...։

Ղազար Ջահկեցին քազմիցս հիշում է հայոց անցյալի նշանավոր թագավորների անունները, փառաբանում նրանց գործը, մեծությունը՝ նպատակ ունենալով ժողովրդի մեջ բորբոքելու ազգային նոր պետականության հասնելու հույսը, թեժացնելու բռնակալական լծի դեմ նրա մաքառողական պայքարը, ատելության կրակը.

Մեծ թագաւորդ Արշակունեաց,
Պետ և իշխան Հայոց Մեծաց,
Յաղթող արքայդ ի մէջ քաջաց.
Ո՞վ սուրբ Տրդատ, արքայդ հրզօր,
օգնեա՛ մեզ այսօր[26]։

24 Նույն տեղում, էջ 209—210։
25 Նույն տեղում, էջ 239—240։
26 Նույն տեղում, էջ 196։

Բանաստեղծը հորդորում է կռվել, մարտնչել սովորել մեր նախնիներից, զինվել համբերությամբ, զենքով վանել «թշնամին մեր», զենքով պաշտպանել զազգս և զազիս մեր»: Մարտաշունչ այս ոգին ու տրամադրությունը Ղազար Ջահկեցին արտահայտում է նաև կրոնական որոշ երգերում։

Ուշագրավ է Ղազար Ջահկեցու «Երգ սրբոյն Մեսրոպայ վարդապետին» բանաստեղծությունը, որն ամենաընդարձակն է նրա պատմաքնարական երգերի շարքում։ Գրերի գյուտը ստեղծվել է հայ եկեղեցու և հայ պետական իշխանության համատեղ ջանքերով, Մեսրոպ Մաշտոցի հանճարով։ Պատմական այս ճշմարտության ֆոնի վրա իրական փաստերի տրամաբանական հյուսվածքի մեջ, Ղազար Ջահկեցին մարմնավորում է Մեսրոպ Մաշտոցի կյանքի սեղմ պատմությունը, մեկ առ մեկ նշում նրա հանճարը բնութագրող գծերը։ Երգիչը ներկայացնում է Մեսրոպ Մաշտոցին փրկև հայոց հոգևոր ընդհանրական կյանքի, վերածնդի դրոշակակիրը, «զարդ Հայաստանեայց», «պարիսպ հաւատոյ», ազգի «առաջնորդ», սերունդների «դաստիարակ», առաջին ուսուցիչ և մանկավարժ, «աստուածագիր տառս ստեղծող», «սիւն եկեղեցւոյ», «հանճարների մարմնացում», Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Մամբրեի, Հովսեփի, Կորյունի ուսուցիչ, որոնց առաջնորդել է «ՅԱթենացւոց աշխարհն» և նրանց լույս ու գիտություն տարածել հայոց երկրի վրա.

Սուրբն Մեսրոպ ըստ Մովսէսի,
Մեծին Դաւթի և Եղիշէի,
Սուրբ Ղազարու և Մամբրէի,
Յովսէփիոսի և Կորիւնի,
ՅԱթենացւոց աշխարհն հասեալք,
Զիմաստութեան ծաղիկս առեալք,
Իբրև մեղու թևօք բարձեալք,
Բերեալ զաշխարհս լուսաւորեալք[27]։

Անշուշտ սա Մեսրոպ Մաշտոցին նվիրված առաջին երգը չէ. ձեռագիր և տպագիր գրքերի հիշատակարաններում և այլ էջերում բազում երգեր կան նրան ձոնված։ Դեռևս XII դ. Կարապետ Սասնեցին գրել է Մաշտոցի մասին պատմաքնարական մի խոշոր պոեմ։ Ղազար Ջահկեցին, սակայն, հայոց գրի ու գրականության մեծ երախտավորին գնահատում է հատուկ նկատառումով. նա մեկնաբանում է գրերի գյուտի ամենափրկիչ դերը հայ ժողովրդի գոյատևության հարցում և ձգտում է ցույց տալ, թե որքան ավելի մեծ է նրա այդ դերն ու նշանակությունը, հայոց կյանքի տևական նահանջին հաջորդող՝ նոր և ընդհանուր վերանորոգության շարժման մեջ։ Մեսրոպ Մաշտոցի գյուտի, հայոց ազգային գրի, տառի կենարար ոգին է բարձրացնում Ղազար Ջահկեցին, կենարար լույսը, որի ցոլքերը դարերի խորքից լուսավորում են մութ ու խավար կյանքի բոլոր անկյունները։

Կերպարան տառից,
Ազդեալ յանեղէն,
Մեսրոպայ մեծի՝
Ջեռամբ լուսեղէն[28]։

Կարծես թե Ղազար Ջահկեցուն է ձայնակցում Միքայել Չամչյանը՝ դարավերջում։ XVIII դ. բարձրանում է գրերի գյուտի գնահատության մի նոր աստիճան։ Մեսրոպ Մաշտոցի անունը, իբրև առաջին ուսուցչի և մանկավարժի, դառնում է վերանորոգվող կրթական շարժման խորհրդանիշ. հայ պատանիներին, երիտասարդներին դեպի դպրոց, գիր, գիտություն առաջնորդող

27 Նույն տեղում, էջ 169։

28 Մ. Չամչյան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Մոսկվա, 1859, էջ 4։

մոգական ուժ։ Մխիթար Սեբաստացին, Միքայել Չամչյանը և ուրիշները իրենց դասագրքերում, այբբենարաններում բացատրում են Մեսրոպ Մաշտոցի և նրա գործակիցների հեղափոխիչ դերը։

Մեծն Մեսրոպ ըղպատանիս ուշիմ կրթէր,
Քերթողաբար ըղհայ լեզուն ի լոյս ածէր,
Սուրբն Իսահակ Քերթողահայր անդէն նստէր,
Զուտեալսն յԱթէն, փսկ առաքել խորհրդակցէր[29]։

Այսպես ուրեմն։ XVIII դ. բանաստեղծության մեջ պատմականության գիծը դալիս է V դարից։ Ընթերցողը վերահասու է դառնում այն դեպքերին, որոնք վճռական դեր են կատարում հայության կրոնաազգային դոյատեության, սաքառողական պայքարի, վերածնդի, վերանորոգության շարժման մեջ։ Այդ շրջանակներում վեր են խոյանում նաև հայ ժողովրդի անցյալի և նոր ժամանակների նշանավոր գործիչների, հանճարների դիմապատկերները։

XVIII դ. քնարական բանաստեղծության պատմականության գիծը չի սահմանափակվում ազգային շրջանակների մեջ։ Դա ուսումնասիրության առանձին հարց է։ XVIII դ. հայոց քնարերգությունը զարգացնում է նաև հոնա-հռոմեական գրականության ազդեցության շրջանակները։ Արիստոտելի, Հոմերոսի, Պլատոնի, Պյութագորասի, Պիհռոնի և այլոց պատմագիտական, դեղագիտական հայացքները խորը հետք են թողել Պաղտասար Դպրի, Հակոբ Նալյանի, Պետրոս Նախիջևանցու և այլոց աշխարհայեցողության վրա։

XVIII դ. քնարերգության հայրենասիրական, պատմահայրենասիրության գիծը, ինչպես հայտնի է, XIX դ. սկզբից ի վեր զարգանում, կատարելագործվում է։ Արսեն Բագրատոնու, Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի, Գաբրիել Պատկանյանի, Միքայել Նալբանդյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Ռափայել Պատկանյանի և այլոց պատմական, պատմահայրենասիրական և քնարական բազմատեսակ երգերով և պոեմներով նոր նվարագիր է ստանում հայոց ազգային-ազատագրական, քաղաքական, հայրենասիրական բանաստեղծությունը։ Այս բանաստեղծությունը, որ ըստ արժանվույն ուսումնասիրվել ու գնահատվել է հայոց նորագույն շրջանի գրականությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում, իր առաջին ծիլերը տվել է XVIII դ.։

## НОВЫЙ ВЗГЛЯД НА ИСТОРИКО-ПАТРИОТИЧЕСКУЮ ПОЭЗИЮ XVIII в.

Ш. Л. НАЗАРЯН

### Резюме

Армянская лирическая историко-патриотическая поэзия XVIII в. как литературное явление, как составная часть новой, патриотической духовно-национальной поэзии пока еще не изучена в должной мере.

Насущные вопросы того времени, заботы дня требовали непосредственного лирического отклика, обобщенного поэтического слова. Выдающиеся поэты XVIII в.—Багдасар Дпир, Петрос Капанци, Саак Ерец, Погос Ванецян, Григор Ошаканци и особенно Газар Джахкеци в своих историко-патриотических лирических песнях поднимали на новую ступень вопросы единства народа и церкви, дальнейшей судьбы армянского народа, его самосознания, возрождения утраченной Арменией государственности.

[29] Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբար լեզուի..., Վենետիկ, 1930, էջ 4։